ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հունիսի 28-ին ժամը 15:00-ին քաղաք Էջմիածին, Մովսես Խորենացի 2 հասցեում տեղի ունեցավ Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հինգերորդ նիստը, որին մասնակցեց Վաղարշապատ համայնքի ավագանու 17 անդամ հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց նիստն արձանագրողը:

Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հինգերորդ նիստին հրավիրված են համայնքային կառույցների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Նիստը վարում է համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Նիստի արձանագրումն ապահովում է աշխատակազմի քարտուղար Գ. Հարությունյանը:

Նիստն սկսվեց Հայաստանի Հանրապետության և համայնքի հիմներով:

Նիստն անցկացվում է առցանց հեռարձակմամբ:

Ավագանու նիստին չներկայացած անդամների բացակայությունը համարվում է անհարգելի՝ հարգելիության վերաբերյալ տեղեկատվություն չներկայացնելու հիմքով:

Նիստը վարողը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվեց քննարկել ու հաստատել օրակարգը:

Օրակարգի նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Վաղարշապատ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի 2023 թվականի հունիսի 28-ի հինգերորդ նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. ՀՀ ԵԿՄ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.07.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 63 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունեց թիվ 58-Լ որոշումը:

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լուսինե Քալաշյանը:

Ներկայացնելով ՀՀ ԵԿՄ Էջմիածնի տարածքային բաժանմունքին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու և Էջմիածին համայնքի ավագանու 17.07.2020 թվականի թիվ 63 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման նախագիծը:

Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 59-Ա որոշումը:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Միհեր Մկրտչյանը:

Ներկայացնելով ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 60-Ա որոշումը:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը:

Ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին որոշման նախագիծը:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր տալու համար ավագանու անդամներ չհերթագրվեցին: Ավագանու անդամների մտքերի փոխանակման և հարցի քննարկման ավարտից հետո նախագահողը առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 17 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ - 17
դեմ – 0
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

Վաղարշապատ համայնքի ավագանին ընդունում է թիվ 61-Լ որոշումը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո Ավագանու նիստը հայտարարվեց փակված: